«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝«Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Հաստատություն ՝ *«Կապանի թիվ 6 ՆՈՒՀ» ՀՈԱԿ*

Դաստիարակ ՝ Սյուզաննա Հակոբյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2. Նախագծերի նպատակը 5

3. Միջառարկայական կապը ----------1

4. Ազգային, ծիսական, շարժախաղերի դերը երեխայի ֆիզիկական

զարգացման գործում 2

5. Ծիսական, ազգային երգերի, խաղերգերի ուսուցում,

կատարում 1

6. Ծիսական գործունեության իրականացման գործողություններ 2

7. Հաստատությունում իրականացվող ծեսեր ---------- 7

8. Եզրակացություն ---------- 1

9.Գրականության ցանկ_____1

1. Ներածություն

Ազգային ծեսը մշակույթային այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքային պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցը,ազգային տարազը,ազգային երգ ու պարը,ազգային խաղերի պահպանման ժառանգման գործերը:

Ծես նշանակում է նվիրում,ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը,պետությանը:

Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը:Ծեսը ներառում է վարքի այն ձևերը,որոնք իրենց էությամբ նշանակալի ու խորհրդանշական են և ունեն նպատակային ,գործնական բնույթ:

Մարդաբան Մ.Դուգլեսը ծեսը սահմանում է,որևէ գործողությունների տիպեր,որոնք ծառայում են հավատք արտահայտման համար,կամ էլ ուղղակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր:<<Ծես >>հասկացության տակ ենթադրվում է ստանդարտ,հաստատուն գործունեության հետևողականություն,որն ունի արարողական բնույթ:Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ,այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ըստ Ս. Արղությանի <<Ծիսակարգը խիստ կանոնակարգված է,անփոփոխ,միակերպ ու հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ ,ունեն զանգվածային բնույթ այսինքն դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր>>:

Ժողովրդական ծեսերը ծրագրված երևույթ չեն,այն ժողովրդի հավաքական և տնական ստեղծագործության արդյունք է ,անընդհատ փոփոխությունների ենթական,բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պահպանողական:Հայկական ծեսերը շատ հարուստ են երգերով,պարերով ազգային խաղալիքներով,խաղերով:

Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին,իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները ,խնջույքները,տնական հագուստը,նվերները ունեն իրենց առանձնահատկությունները:

Դրանք բոլոր տներում էլ առկա են:Խնջույքները չեն կազմակերպվում

ուտել-խմելու համար ,յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է

համապատասխանի տվյալ ծեսի իմաստին ,ըստ որի համապատասխանեցման համար ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը,ժամը,մասնակիցները ուտեստների տեսակները:

Այսպիսով հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր խտացումներ՝ ծեսերը ,սովորույթները առանձնակի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի հնդհանուր կողմերը:Ավանդույթը դառնում է միասնական ներդնելով մի ամբողջություն:Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և որպես ստեղծագործ,և որպես գործիչ,և որպես քննադատ:

Մանկապարտեզում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է ավանդույթների,ծեսերի,տոների տեսքով նաև:

Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը:Եթե ընտանիքում պահպանվում է ավանդույթները,ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով մանկապարտեզից:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը,ճանաչել այն միջավայրը,որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը,ծիսական գործողությունները,պարագաները ,դրանց խորհուրդ ու պատրաստման տեխնոլոգիան:Յուրաքանչյուր ծես ծիսական գործողությունները ունեն տոնական մաս,որտեղ կարելի կատարել ժամանակակից պարեր ու երգեր:

Ծիսական նախագծերի նպատակն է ծեսը,տոնը,դարձնել երախայինը,որն էլ կլինի ոչ միայն մասնակից այլև փսխանցող :Երեխան քայլ առ քայլ անկաշկանդ միջավայրում,ամենօրյա արդյունավետ գործունեությամբ ,լիրրավ մասնակցությամբ կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով ,յուրացնում է ծեսը:Վերջին տարիներին մեր մանկապարտեզում ծեսը որպես ինտերգրված թեմատիկ միավոր դարձել է կրթության կարևոր բաղկացուցիչ մաս՝ ներառելով ամենատարբեր,հմտություններն ու կարողությունների առերևույթ միգուցե չերևացող բայց իրականում շատ խորքային հիմք:

Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները զարգանում են, փոփոխվում հասարակական

փոփոխությունների հետ համաքայլ:Դրանք չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու: 21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:Կյանքն անընդհատ գտնվում է շարժման և զարգացման մեջ և դարի խնդիր է այդ ընթացքի մեջ պահպանել ազգայինը:

Այսօրվա երեխաները մեծանում են մի ժամանակաշրջանում ,որը էականորեն տարբերվում է իրենց ծնողների ապրած

ժամանակներից՝ տարբեր արժեքներ,իդեալներ,կանոններ:էական խնդիր է պահպանել ազգայինը,սերնդից-սերունդ փոխանցել մնայուն արժեքներ:

2. Նախագծերի նպատակը

Մանկապարտեզում իրականացվող նախագծերի նպատակն է՝ ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Խնդրի իրագործման համար մենք առաջարկում ենք.

¬ ծանոթանալ ազգային ծեսերին ու տոներին,

¬ ծեսը վերականգնել, նրան նոր կյանք տալ: Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո՝ որոշում ենք, թե ինչ ճանապարհ են անցնելու երեխաները՝ ծիսակատարությանը նախապատրաստվելիս.

. ծանոթանում են ծեսի հետ,

. հավաքում ենք տեղեկություններ տարբեր աղբյուրներից՝ մեծերից, ինտերնետից, գրքերից և այլն,

ա. խաղիկներ,

բ. առած – ասացվածքներ,

գ. հանելուկներ,

դ. հեքիաթներ, պատմություններ, ավանդություններ,

ե. երգեր:

Նկարում են

ա. ծիսական հերոսներին,

բ. ծիսական պատկերներ,

Սովորում են

ա. ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ, սովորում են ավանդական պարեր, պատրաստում են ծիսական պարագաներ, խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր, բեմականացնում են երգեր, կատարում են բնագիտական փորձեր, գնում են ճամփորդության, հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք, մեծերի օգնությամբ գրում են նամակներ, բարեմաղթանքներ, վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը: Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգութանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ:

Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին: Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձոր բաժանում: Կամ՝ հարսանեկան արարողության ժամանակ խնձորի՝ որպես պտղաբերման խորհրդանիշ

և այլն :Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք:

Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ:

Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Վաղուց ի վեր դարձել է կրթության կարևոր բաղկացուցիչ մաս՝ ներառելով ամենատարբեր հմտությունների ու կարողությունների՝ առերևույթ միգուցե չերևացող, բայց իրականում շատ խորքային հիմք:Մանկապարտեզում իրականացվող ծեսերը պայմանականորեն կարող ենք բաժանել երկու մեծ խմբի՝ հայ ավանդական, որոնք կրում վերածվում են ծիսական

Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

ա/ նյութի յուրացում (լեզուն, մտածողության գեղարվեստական այլ արտահայտչամիջոցներ),

բ/ գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում

գ/ գեղարվեստական խոսքի մշակում,

դ/ տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների

ե /ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),

զ/գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում,

է/ ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:

Այս աշխատանքները նպաստում են.

- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը
- ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը

- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները, ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին
  պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Երեխան կիմանա

- ազգային ծեսերը,
- ազգային սովորույթները,
- ազգային ավանդական պարերը,
- հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ծիսական կերպարները
- ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,
- ծիսական կերակրատեսակները,
- ծիսական պարագաները:
-

Երեխան կկարողանա .

- Պարել ազգային ավանդական պարեր,
- երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- պատրաստել ծիսական պարագաներ,
- խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր,
- պատրաստել ազգային ծիսական կերակրատեսակներ,
- համացանցից, այլ աղբյուրներից ծեսին վերաբերվող նյութեր գտնել:

Երեխան կլինի

- Ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող: Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը:

- Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:
- Ծիսական միջավայրում կատարում են ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

3. Միջառարկայական կապը

- Միջառարկայական կապը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս **Երաժշտություն** – գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ժողովրդական երգեր:
- **Պար** - գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:
- **Խոսքի զարգացում** - գիտեն ծեսը, ծիսական ավանդություններ և զրույցներ, ասույթներ, առածասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում են խաղարկել ծիսական գործողություններ, կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի ծեսին):
- **Ֆիզկուլտուրա-** գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:
- **Էկոլոգիա-** կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ՝ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան, գիտելիքներ:
- **Կերպարվեստ** - պատրաստել ծիսական պարագաներ, այդ թվում՝ հանդերձանք, կատարել նյութի ընտրություն:
- **Խոհանոց -** պատրաստել կամ իմանալ ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ:

  Այսպիսով՝ ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական, խորհրդավոր հատկություններ: Ծագել է հնագույն ժամանակներում և դարձել պաշտամունքային արարողությունների անբաժան մաս: Այն ուղեկցվում է աղոթքներով, խմբերգերով, երաժշտությամբ: Ծեսերը արտահայտում են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի ժամանակի ընթացքում փոփոխվում, վերամշակվում և հարմարեցվում են իրադրության պահանջներին: Հայ ժողովրդական ծիսական համակարգի ավանդական ծեսերն իրենց բացառիկ կարևոր տեղն ու դերն ունեն հաստատությունում , քանի որ նրանց ակունքների վրա է հիմնվում, ապա և կառուցվում բարձրարժեք կրթությունը: Մի շարք ծեսերի ու սովորույթ դարձած ծեսերի միջոցով զարգանում է սանի ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, վարքը, ակտիվությունը, անկաշկանդվածությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

4. Ազգային, ծիսական, շարժախաղերի դերը երեխայի ֆիզիկական զարգացման գործում

Բնության մեջ ապրող երեխան ճարպիկ է, գործունյա, անվախ, ուժեղ, խելացի, սրամիտ, համարձակ և այլն, որովհետև միայն այդպիսի հատկություններ ունեցողը կարող է ոչ միայն գոյատևել այդ միջավայրում, այլև լիարժեք անդամը լինել, մասնակից լինել միջավայրի ինչպես ամենօրյա գործունեությանը, այնպես էլ իր անձնային հետաքրքիր որակներով այն փոխել, զարգացնել: Մանուկը ստեղծել է այնպիսի խաղեր, որտեղ օգտագործել և ցուցադրել է իր մտավոր և ֆիզիկական կարողությունները, ստեղծագործական երևակայությունը: Խաղի միջոցով լուծվում են խնդիրներ, որոնք կյանքը դնում է մանկան թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, թե՛ հոգևոր զարգացման ընթացքի վրա: Հենց այս պատճառով էլ խաղը դառնում է ծիսական միջավայրում ներառվելու միջոց: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել դաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է: Իսկ մեծերն էլ պետք է իմանան, որ այդ ամենը հավասարապես հարկավոր է բոլորին, ըստ այդմ էլ՝ բոլորը հավասար մասնակից են՝ իրենց կարողությունների սահմաններում: Այս դեպքում մանուկը, ինչպես նաև մեծը, կլինի ծեսն իմացող, կրող, փոխանցող: Շատ կարևոր է այս ամենը ներմուծել ընտանեկան միջավայր, որտեղ սիրելի, հարազատ մարդկանց հետ մանուկը ավելի վստահ, համարձակ ու ազատ կգործի՝ ժառանգելով ամենակարևորը՝ ազգային մշակութային արժեքները: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար ուսումնառության բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար: Ֆիզիկական դաստիարակությունը անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչն է:Նախակրթարանում ֆիզիկական

դաստիարակության նպատակն է պահպանել և ամրապնդել երեխայի առողջությունը,կոփել օրգանիզմը, ապահովել ֆիզիկական և հոգևոր ներդաշնակ զարգացումը, ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել կենսական նշանակություն ունեցող շարժումները, զարգացնել հետաքրքրություն շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյականամայինհատկանիշներ: Ֆիզկուլտուրայի պարապմունքները պետք է նպաստեն ոսկրամկանային համակարգի կայացմանը և զարգացմանը, օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացմանը և շրջապատի անբարենպաստ պայմաններին դիմանալուն:Երեխաների խոշոր մոտորիկայի զարգացման հիմնական գործոնը տարիքին համապատասխան ֆիզիկական վարժություններն ու շարժախաղերն են: Շարժախաղերը խաղային գործունեության այն տեսակներն ե անձի բարոյականամային հատկանիշներ.

- ինքնուրույնություն
- ակտիվություն
- մարդկային փոխհարաբերությունների կուլտուրա

ֆիզիկական որակներ.

- ճարպկություն
- արագաշարժություն
- դիմացկունություն

Ֆիզկուլտուրայի յուրաքանչյուր պարապունքին իրականացվում է երեք կարևոր խնդիր՝ առողջապահական, կրթական, դաստիարակչական:

Մենք՝ հայերս, ունենալով բազմադարյան պատմություն, ունեցել ենք բազմաթիվ ազգային տոներ և ծեսեր, որոնցից մի մասը տարիների ընթացքում ընթարկվելով փոփոխությունների, պահպանվել են մինչ օրս: Իսկ ինչ ծես առանց ծիսական երգերի, խաղերգերի, խաղերի:Երեխային ծեսի մեջ ներառելու լավագույն և արդյունավետ միջոցը խաղն է: Ունենալով հարուստ ծիսական ավանդույթներ, ազգային տոներ՝ մենք պարտավոր ենք մեր երեխաներին ներգրավել այդ ամենի մեջ (եթե ոչ ամբողջությամբ, գոնե որոշակի չափով):
Տոնի կամ ծեսի ակտիվ մասնակիցը ոչ միայն մեծերը պետք է լինեն(դաստիարակ, ծնող, տատիկ ու պապիկ), այլև հենց ինքը՝ երեխան:Ծեսի իրականացումն իր մեջ ներառում է երգ-պար, բանահյուսություն, գրականություն, կերպարվեստ-ձեռարվեստ, թատրոն, բնագիտություն և խաղ: Ծիսական խաղերը՝ հատկապես շարժուն խաղերը մեծ դեր ունեն նախադպրոցական տարիքի երեխայի ֆիզիկական զարգացման գործում:

5. Ծիսական, ազգային երգերի, խաղերգերի ուսուցում, կատարում

Երաժշտական գործունեությունը նպատակ ունի սաների մոտ երաժշտության ընկալունակություն, ճաշակ ձևավորել՝ ազգային, ծիսական երգերի, պարերգերի, խաղերգերի միջոցով: Ազգային ծեսն իր մեջ ներառում է այդ նյութը, և ծեսի իրականացման ընթացքում, ուսուցանելով, կատարելով երաժշտական նյութը, հասնում ենք մեր նպատակին:

Երգերն ուսուցանվում են «անընդմեջ կամ արձագանք» մեթոդով, կատարվում է ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանք: Ծիսական, ազգային երգերի, խաղերգերի ընտրությունը կատարվել է հիմնականում Արթուր Շահնազարյանի «Կաքավիկ» երգարանից, ինչպես նաև Կոմիտասի երգացանկից, այլ աղբյուրներից: Դրանք հաստատվել են մանկավարժական խմբի կողմից.

Երգերի կատարումն ուղեկցվել է.

- ծիսական գործողություն կատարելով,
- համապատասխան շարժումներ կատարելով,
- երգը բեմականացնելով:
- Եթե երգի ուսուցման ընթացքում հնարավոր է միաժամանակ կատարել ցուցադրվող շարժումները (օրինակ՝ «էկեք ծեծենք սոխ ու սխտոր»), ապա դրանք կատարվում են: Եթե միաժամանակ կարելի է կատարել ծիսական գործողություն (օրինակ՝ Համբարձման գովքը), ապա կատարվում են:
  - Երգերի ուսուցումից հետո դրանք կատարվեցին ծեսի իրականացման ընթացքում՝ ծիսական գործողության անհրաժեշտ պահին: Սաները երգերը ոչ միայն կարողանում, այլև կատարում են սիրով, ճիշտ ընկալելով երգի բովանդակությունը, երաժշտական կառույցը;
  - Արդյունքում երաժշտական նյութը կատարվում է այն միջավայրում, որտեղ ստեղծվում է և պետք է հնչի, դրանով էլ հասկանալի և ընդունելի է դառնում կատարողի և մասնակցի կողմից:
  - Հետևաբար ազգային, ծիսական երգերը կարող են լինել լավագույն նյութերը երաժշտական դաստիարակության, ճաշակի ձևավորման համա
    «Թիվ 6 ՆՈԻՀ » -ում իրականացվում են բազմաթիվ ծեսեր, որոնք սահմանված են հաստատության միջոցառումների հեռանկարային օրացույցով: Դրանք են՝ Սուրբ Ծնունդ -Նոր տարի, Ղափամայի ծես, Բարեկենդան, Ծառզարդար-Զատիկ, Համբարձում-Զանգյուլում, Վարդավառ, Թթուդրիկ-Հարիսա, Խաղողօրհնենք:
    Մանկապարտեզը ունի ազգային սրահ,որը անընդհատ համալրվում է նոր աշխատանքներով,դերային տիկնիներով,ազգային պարագաներով:

6. Ծիսական գործունեության իրականացման գործողություններ

Մեր մանկապարտեզում ծիսական գործունեությունը իրականացվում է որոշակի փուլերով

- Ծեսի նախապատրաստում
- Ծիսակատարություն

Այսօր մենք ծեսերն իրականացնում ենք որպես գործունեության ձև,որով երեխան ապրում է,խաղում է,երգում,պարում,ընկալում,ճանաչում:Մեր փոքրիկները ծեսը ընկալում են իր երգած երգի,իր պարածպարի,իր ձեռքով պատրաստած ծիսական ուտելիքի,իրի,խաղացածխաղի կերպով:

Նախքան ծեսի նախապատրաստությունը մշակվում է աշխատանքային պլան,որը պարզ արտացոլում է ըստ տարիքային խմբի աշխատանքները,որոնց կազմակերպման գործում լուծվում են ծատ կրթական խնդիրներ;

Ծեսի իրականացման մասնակիցներն են

- մանկավարժական կազմ
- երախաներ
- ծնողներ

Ծիսական գործողությունների իրականացման գործում մեր առջև դրվում է հհետևյալ նպատակները

- Սովորեցնել ծանորացնել ազգային տոներին,անցկացման կարգին ծիսական առօրյային
- սովորեցնել ծիսական երգեր,խաղեր՝խաղերգեր,ասիկներ,օրհնանքներ
- Ծանոթացնել ծիսական հերոսներին
- Ծանորացնել ազգային նվագարաններին,ազգային երգ ու պարին,խաղիկներին,ազգային խոհանոցին
- Ձևավոևել գիտելիքներ իր ազգային պատկանելությանվերաբերյալ,ձևավորել ազգային մտածելակերպ,ազգային դիմագիծ
- Ձևավորել և խորացնել գիտելիքները բուսական,կենդանական ածխարհի,ավանդույթների,տոների վերաբերյալ

Նպատակին հասնելու գործողություններ

- Մանկապարտեզում ազգային ծեսեի,ծիսակատարություններին նվիրված միջոցառումներ կազմակերպում՝պահպանելով ծեսի բուն խորհուրդն ու արարողակարգը
- Թեմատիկ զրույցների կազմակերպում
- Գեղ գրականության,բանահյուսության տարբեր ժանրերի ընթերցում
- էքսկուրսիաների,այցելությունների կազմակերպում
- Հանդիպումների կազմակերպում
- Սոցիալական միփոցառումների կազմակերպում(շաբաթօրյակ,ցուցահանդես-վաճառք)
- Ուսուցողական ճանաչողական խաղերի,ազգային,ծիսական խաղերի կազմակերպում

Իրականացման հիմնական ուղղությունները

- Մտավոր
- Բարոյական
- Գեղագիտական
- էկոլոգիական
- Աշխատանքային
- Ընտանիքի հետ համագործաքցություն

Միջոցները որոնք հնարավորություն են տալիս իրականացնել ծեսը

- Շրջակա միջավայր
- Ազգային մշակույթ
- Թեմատիկ պարապմունքներ
- Գեղ. գրականության բանահյուսություն
- Խաղային գործունեություն
- Փառատոնների նախագծերի կազմակերպում
- Աշխատանքային գործունեություն-գործնական պրակտիկ աշխատանք

7. Հաստատությունում իրականացվող ծեսեր

Ղափամայի ծես

Այս ծեսը հատկապես սիրելի է սաների համար, քանի որ շատ «քաղցրահամ ու մեղրանուշ» ծես է: Ամեն մեկն իր հետ բերում է փոքրիկ դդում, ծանոթանում ենք, իմանում, թե ինչ է դդումը, ինչ գույն ունի, ինչ ձև ունի, ինչ համ ու հոտ:

Կտրում ենք դդումը, հանում կորիզները, իմանում, թե կորիզներն ինչի համար են, հաշվում ենք, տնկում ենք, որ նորից դդում աճի, իսկ մնացած կտորներով կերպարներ ենք ստանում: Դդումիկներով դուրս ենք գալիս բակ, խաղեր խաղում, գլորում: Գունավոր թղթերը կտրատում ենք, ներկում, սոսնձում կորիզները և ստանում ենք դդմադիմակներ: Կատարում ենք տեխնոլոգիական աշխատանք, դդմանարնջագույն թելերով պատրաստում ենք դդմե գնդիկներ և կախում խմբասենյակի պատուհաններից կամ դռնից: Նաև դդումների վրա ներկում ենք ու սիրուն կերպարներ ստանում՝ էլ՝ տխուր դեմքով, է՝լ ուրախ, է՝լ զարմացած…Եվ, ամենակարևորը, Ղափաման: Դդմի գլուխը կտրում ու հանում ենք կափարիչի նման, փորում ենք, միջուկը հանում, մեջը լցնում բրինձ, չամիչ, չիր, մեղր, կարագ, համեմունքներ ու դնում ջեռոցը՝ այս կարևոր իրադարձությունը համեմելով ուրախ ծիսերգերով:Արդյունքում՝ մի սիրուն, շքեղ, փայլուն ու համով ղափամա: Այս տարբեր աշխատանքների միջոցով սանի մոտ զարգացնում ենք նախ զգայարանները, կարողանում է համտեսել, իմանալ՝ ինչ համ ունի, ճանաչում է գույնը, ձևը, չափը, կառուցվածքը և այլն:

Սանը տեխնոլոգիական աշխատանք է կարողանում կատարել, ինքնուրույն կտրել, պտտել թելը, փակցնել, սոսնձել.զարգանում է մանր մոտորիկան:

Սուրբ Ծնունդ

Սուրբ ծննդին ընդառաջ այցելում ենք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եկեղեցի,որտեղ երեխաները տեղեկություն են ստանում օրվա խորհրդի մասին,ձևավորվում է նախնական գիտելիքներ տոնի վերաբերյալ,ստանում ենք քահանայի օրհնությունը և վերադառնում մանկապարտեզ:Երեխաների հետ զարդարում ենք ամանորյա կենաց ծառը,պատրաստում չարխափաններ,երգում ծիսական երգեր,Սուրբ ծննդյան ավետիսներ,խաղում ընկուզախաղեր:Այցերի,էքսկուրսիաների,զբոսանքների ժամանակ մասնակից ենք դարձնում նաև ծնողներին:

Հին-Նոր Տարի

Այս ծեսին երեխաները խմբից խումբ են գնում հավաքում քաղցրավենիք,կոնֆետներ,այնուհետև բոլորը հավաքվում են դահլիճում,մեզ հյուր է գալիս Կաղանդ Պապը և ուրախ աշխույժ նշում ենք տոնը,երգելով,պարելով ծիսական երգեր ;

Բարեկենդան

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Ուրախության, զվարճանքի ծես է, որը կապված է գարնան սկսելու հետ: Ծեսի նպատակն է զվարճանալու, ուրախանալու, հրճվելու միջոցով վերակենդանացնել մարդուն, դիմավորել բնության զարթոնքը: Պարերի, խաղերի, զվարճությունների երկու շաբաթվա ընթացքում խաղում ենք տարբեր խաղեր ՝ ճոճախաղ, ընկուզախաղ, աքլորակռիվ և այլն:

Տոնը կապ է ունեցել գարնան սկսվելու հետ:

Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ժողովրդի կողմից այն ընկալվել է որպես ամենաազգային (հայոց ազգի օրեր), ինչպես նաև ամենաերջանկաբեր տոնը, խրախճանք, ճոխ և առատ ուտելիքներ վայելելու օր: Պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Տոնում ենք փետրվար ամսին, տևում է երկու շաբաթ, հաջորդում է Սուրբ Սարգսի տոնին և ավարտվում է Մեծ պասով:

Կազմակերպում ենք սեմինար պրակտիկում մանկավարժների հետ՝հրավիրելով մասնագետ,պատրաստել ենք ծիսական տինիկներ:Ուղտի կերպարով տիկնիկ ենք պատրաստում և պարեցնում:Ուղտը փորձում է վազել երեխաներիի հետևից, բռնում նրանց, իսկ նրանք փախչում են այս ու այն կողմ: Պատրաստում ենք Ուտիս տատ և Ակլատիզ: Ուտիսը մեզ անընդհատ ասում է, որ յուղոտ ուտելիքներ ուտենք, իսկ Ակլատիզը՝ հակառակը: Ակլատիզը պատրաստում ենք սոխի գլխից, որի վրա խրում ենք չորս սպիտակ և երեք սև փետուր, որոնք խորհրդանշում են սև հողը և սպիտակ ձյունը: Ակլատիզի պարանոցից կախում ենք քարեր և կծու պղպեղ, որ եթե յուղոտ բան ուտի, քարն ընկնի գլխին, և բերանն այրվի պղպեղով:

Յոթ փետուրները խորհրդանշում են յոթ շաբաթները, որոնք ամեն շավաթ սաները հերթով պոկում են, իսկ վերջում Ակլատիզը թռչուն է դառնում և գնում: Փայտե շերեփներով պատրաստում ենք զանազան տիկնիկներ և երգելով մեր տոնի ամենսիրված երգը `«Գնացեք, տեսեք...»-ը`: Սա է Բարեկենդանը...

Մասնակիցները՝ ավագ խմբի երեխաներ,մանկավարժներ,ծնողներ

Ժամանակահատվածը՝ փետրվար

Նպատակը՝ Ծեսին նոր կյանք տալով՝ ստեղծել նոր կերպարներ, նոր խաղեր:

Խնդիրները՝

- Իմանալ և սովորել ծեսին վերաբերող ծիսական երգերը, պարերը:
- Պատրաստել ծիսական պարագաներ:
- Խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:

- **Ասիկներ**
  Ահա եկավ հայոց ազգին օրերը,
  Հանեցեք հիները, հագեք նորերը:
  Բարեկենդան, փորեկենդան,
  Բարեկենդան օրեր է,
  Խելքս գլխես կորեր է:

Կլորիկ ու թմբլիկ եմ,

Պստլիկ ու ճստլիկ եմ,

Քիթս պուճուր – պուճուրիկ է,

Աչուկներս սևուլիկ են,

Կա՞ ինձ նման սիրունիկը:

Չկա, չկա, չկա:

Ալ խնձորի իմ տղեն,

Շեկ շլորի իմ տղեն,

Կանաչ թզնի իմ տղեն,

Կարմիր նռնի իմ տղեն

Երգեր

- Գնացե՛ք, տեսե՛ք
- Այ, Ֆոռկա
- Խնոցի խաղերգ

Ազգային խաղեր

- Պարանքաշոցի
- Աքլորակռիվ
- Աղջիկ փախցնոցի

Ազգային պարեր

- Թամզարա

Աշխատանք գրական ստեղծագործությունների հետ

- Ներկայացնել, բացատրել անհասկանալի բառերը:
- Ստեղծագործությունները յուրացնել խաղ–բեմականացման միջոցով:

Տեխնոլոգիական գործունեություն

- Պատրաստել ծիսական տիկնիկներ (Ուտիս տատ, Ակլատիզ պապ, զվարճալի կերպարներ):
- Պատրաստել ազգային ուտեստներ (հալվա, գաթա,տարբեր ճաշատեսակներ հայկական ավանդական,ազգային խոհանոցից):

Խաղեր և թատերական ներկայացումներ

Խաղի մասնակիցների արտաքինը հնարավորինս ավելի ծիծաղելի և վախեցնող պետք է լինի: Սովորողները դառնում են ծաղրածուներ, հակառակ սեռի հագուստ են կրում: Խաղում են ծիծաղելի սյուժե ունեցող թատերախաղեր:
Բարեկենդան օրերին ընդունված է խաղալ կենցաղային խաղեր, օրինակ՝ «խնամախոս» գնալու ներկայացումը: Խաղի ամբողջ իմաստը սրամտությունն է և զվարճախոսությունը: Խմբերը կանգնում են դեմառդեմ և երգում են իրար հաջորդելով, հաճախ քառյակ-քառյակ:
Զվարճությունները ավարտվում են «Ուտիս տատին» վռնդելու, և «պաս պապին» հրավիրելու ծեսով:

Բարեկենդանի օրերին բնորոշ են ձնախաղերը, պահմտոցին, փայտով և գնդակով խաղերը: Ընդունված են նաև մրցախաղեր, ձիարշավներ, ըմբշամարտեր, վազքի մրցույթներ, թատերական և բանավիճային խաղեր, որոնք միտված են եղել մտքի և մարմնի ճկունությանը, սրամտությանը, ֆիզիկական ուժին, տեղանքի իմացությանը: Ծառզարդար,Սուրբ զատիկ– Ծաղկազարդը նախորդում է Զատկին, որի ընթացքում սկսում ենք պատրաստվել ծեսին, դիմավորել Ուտիսին ու Ակլատիզին: Զատիկը ունի իր ծիսական ծառը, տիկնիկները և ծիսական զանազան խաղերը: Ծառը խորհրդանշում է անցյալը, ներկան, ապագան:

Ծեսի ընթացքում միասին գունավորում ենք ձվեր և թելերով կախում ծառի ճյուղերից: Ձվերը խորհրդանշում են աշխարհը:

«Տի՜զ, տի՜զ, Ակլատի՜զ...» բացականչություններով հարվածում ենք Ակլատիզին և քշում նրան բակից: Այս ծեսը մի քիչ նաև տեխնոլոգիական կարող ենք որակել: Ծնողները մեզ հյուր են գալիս, ու սկսում ենք միասին պատրաստել զատկե ձվիկներ: Սկզբում երկու կողմից փոքրիկ անցքեր ենք բացում ձվիկների վրա, ապա սաները փչելով դատարկում են ձվիկների պարունակությունը, զարգացնում ենք փչելու կարողությունը: Փչում ու փչում են, բայց դեղնուցը դուրս չի գալիս, տեսնեք՝ ինչ ուժով ու ոգևորությամբ են փչում, ու ինչ ուրախություն, երբ վերջապես դեղնուցը դուրս է գալից անցքից: Խառնում ենք մեզ մոտ եղած բոլոր գույներն ու ներկերը: Խառնաշփոթը պատրաստ է: Գույնե՛ր-գույնե՛ր...Բոլորով սկսում ենք զարդարել ներկերի տարատեսակ երանգներով: Արդյունքում՝ բազմապիսի զատկե ձվիկներ:
Սկսում ենք ցորենացանը, սաները բերում են բամբակ և ցորեն, ափսե ու ջուր: Հագնում ենք գոգնոցները, դուրս գալիս բակ: Սկզբից բամբակն ենք հարթ փակցնում տարայի վրա, հետո մի քիչ ջուր ենք ցողում, որ խոնավանա բամբակը, ապա լցնում ենք ցորենը, կարելի է նաև ոսպ ցանել, քանի որ ոսպից դուրս եկածը նույնպես գեղեցիկ է, հետաքրքիր կառուցվածք ունի: Ցանում ենք ցորենը՝ անհամբեր սպասելով ածիկի աճելուն: Ցանում ենք նաև քար, ավազ, ալյուր, որպեսզի որոշ ժամանակ հետո սաները որոշեն՝ ինչու չաճեցին դրանք: Միասին բոլոր խմբերով երգում ենք, խաղում, պարում, ձու գլորում, փետուր նետում, տարատեսակ ծիսական խաղեր խաղում՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի: Իսկական տոնախմբության է վերածվում զատկական զատկախաղեր, անդադար զատկասելուկներ ու ոտանավորներ, զատկահանելուկներ, պարերգեր են հնչում

Համբարձում-Զանգյուլում

Ծաղկահավաքը իրականացնում են ծնողների հետ:Մենք ներկայացնում ենք, թե ինչպես է պետք ծաղիկը քաղել, որ չփչանա՝ նաև դրանից հետագայում դեղաբույս պատրաստելու համար: Իրար օգնելով՝ հյուսում ենք ծաղիկները, պատրաստում երփնագույն ծաղկե ճակտնոցներ ու գունագեղ ծաղկաշղթաներ: Վիճակի ծեսին նախապատրաստվելիս ծնողների հետ հավաքում են յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ տեսակի ծաղկից յոթ տերև, յոթ տեսակի ծաղիկ, հոսող առվից յոթ տեսակի քար: Կատարում ենք տեխնոլոգիական աշխատանք՝ պատրաստելով Վիճակի տիկնիկը:Խմբից խումբ ենք գնում բոլորին հրավիրում բակ նշելու Համբարձման տոնը:

Խաղում ենք Վիճակը, որոշում, թե ում ինչ բարեմաղթանք է բաժին հասնում, հաջողություն մաղթում:

Ծեսերն ամենուր են ու ամեն պահի: Սաների հետ իրականցնում ենք բազմաթիվ սովորույթ-ծեսեր՝ զարգացնելով մի շարք հմտություններ ու կարողություններ:

Դրանցից են՝ հանվել- հագնվելու, լվացվելու, սպասքադրելու, ճաշելու, քնի, խաղի, տուն ճանապարհելու ծես- սովորույթները:

«Գինու ծես...» Այս ծեսի ժամանակ երեխաները մանկապարտեզի հարակից այգում խաղողի բերքահավաք են անում,բերում հասցնում խումբ այնուհետև լվանում ենք խաղողը,հատիկները առանձնացնում ողկյուզից ու սկսում ենք ճզմել,որից հետո լցնում ենք ապակյա տարաներ և սպասում, որ հասունանա:

Այս ամենը կատարում ենք երգով,խաղով:Խաղում ենք <<Մամի,մամի >>խաղը,երգում ենք <<Ա՝յ, իմ խաղող>> երգը:Իսկ խաղողն էլ համտես ենք անում <<Սուրբ Զատիկ>>տոնին:Ծեսի ընթացքում երեխաների գիտելիքները հարստանում են խաղողի աճման,տեսակների,ձևերի,չաջերի,գույնի վերաբերյալ և թե ինչ կարող են պատրաստել խաղողից:

<u>Քնի ծեսը</u> մանկապարտեզում շատ հետաքրքիր ենք իրականացնում, սովորում ենք ինքնուրույնություն, միմյանց օգնելով և ինքնուրույն հանում են հագուստները,

ծալում են,հողաթափերը սիրուն դասավորում են, զույգերով սկսում են բացել անկողինն երը: Վերջացնելուց հետո պառկում են: Փորձ արեցինք մի անգամ միացնելօրօրցային տեսանք, որ շատ հանգիստ քնեցին, անգամ այն երեխան, որը չէր քնում: Հիմա փորձում ենք միշտ կազմակերպել այդպես: Արթնանալուց հետո կրկին ինքնուրույն հագնվում են,փորձում ինչքան հնարավոր է հավաքել անկողինները՝ . ի վերջո, ինքնուրույնությունն այսպես է ձևավորվում: Շատ կարևոր է, երբ սանը կարողանում է սովորել տարբերել իր անկողինը, ճիշտ հանել հագուստը և ճիշտ ծալել…Երբ հագնում են հողաթափերը և նստում ճաշելու, սկսվում է **ուտելու ծեսը:** Ամեն օր ընտրվում են հերթապահներ, ովքեր ուրախ-ուրախ (չէ՞ որ արդեն մեծ են) գնում են խոհանոց, իսկ մյուսները լվացվում են ու արագ-արագ սկսում սպասքադրումը: Մի մասն ափսեներն ու գդալներն է դասավորում, մի մասը փորձում է հաշվել, թե քանի երեխա կա խմբում, քանի աթոռ և սպասք դնի:Դիմավորում ենք հերթապահներին ուրախությամբ ու անհամբերությամբ, թե ինչ ենք ուտելու. ահա սա է ինտեգրված ծեսի տված արդյունքը: Սովորում ենք ինքնուրույն սպասքադրել, սիրուն դասավորել, կարողանալ լուռ ուտել: Ուտելուց հետո ամեն մեկն իր ափսեն դնում է լվմատուցարանի վրա, տղաները սկսում ե ն աթոռները դասավորել, աղջիկները՝ սեղանը մաքրել այնքան, որքան կկարողանան. կարևորը դա չէ: Հաճելի պահ է, երբ տեսնում ես՝ ամեն մեկը գիտի՝ ինչ անի, ու, ամենակարևորը, անում է մեծ ոգևորությամբ:

Սաներն ինքնուրույն փոխում են կոշիկները, հագնում հողաթափերը, կախում են վերարկուները, ուսապարկերը և մտնում խումբ: Տուն գնալիս մի քիչ ծուլանում են, ծնողներին տեսնելիս ուզում են՝ ծնողները հագցնեն, բայց դե դա էլ է բնական:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

- Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:
- Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձ-նավորության ձևավորման կարևորագույն գործոն է:

Փորձարկման արդյունքում.

- Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար:
  - Այսպիսով՝ ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական, խորհրդավոր հատկություններ: Ծագել է հնագույն ժամանակներում և դարձել պաշտամունքային արարողությունների անբաժան մաս: Այն ուղեկցվում է աղոթքներով, խմբերգերով, երաժշտությամբ: Ծեսերը արտահայտում են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի ժամանակի ընթացքում փոփոխվում, վերամշակվում և հարմարեցվում են իրադրության պահանջներին:
  - Հայ ժողովրդական ծիսական համակարգի ավանդական ծեսերն իրենց բացառիկ կարևոր տեղն ու դերն ունեն մեր մանկապարտեզում, քանի որ նրանց ակունքների վրա է հիմնվում, ապա և կառուցվում բարձրարժեք կրթությունը:
  - Մի շարք ծեսերի ու սովորույթ դարձած ծեսերի միջոցով զարգանում է սանի ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, վարքը, ակտիվությունը, անկաշկանդվածությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

Գրականության ցանկ

- Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
- Մ Մկրտչյան <<Ազգային ծեսերին խաղերին նոր կյանք >>,<<Ծեսը ինքնագիտակցության միջոց>>
- <<Նախադպրոցականի ազգային դաստիարակության հիմնահարցերը Սոֆյա Արղութանյանի մանկավարժական հայացքներում>>ուսումնաօժանդակ ձեռնարկ Երևան 2011թ
- Արթուր Շահնազարյան <<Երաժշտությունը նախակրթարանում>>